ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ք. Հրազդան 14.03.2019թ. ժամը 11[00]

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-19/8>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ալեքսան Եղիշյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

Վարդան Քալանթարյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

Կարեն Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ

Հայկ Հակոբյան- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման բաժնի առաջին կարգի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Հակոբյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատում.

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ 12.03.2019թ. ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած ընկերությունները՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն և <<Դամկար>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

1.2 Առաջին տեղ զբաղեցրած ընկերությունները՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն /07.03.2019թ./ և <<Դամկար>> ՍՊԸ-ն /06.03.2019թ./ ներկայացրել են հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը, ինչը համապատասխանում է <<ԿՈՏ-ԳՀԱՊՁԲ-19/8>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

2. Գնահատող հանձնաժողովն որոշեց.

2.1 <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին /չափաբաժին 1/ և <<Դամկար>> ՍՊԸ-ին /2 և 3 չափաբաժիններ/ ճանաչել ընտրված մասնակիցներ:

2.2 Կիրառել անգործության ժամկետ."Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել gnumner.am կայքում:

2.4 անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել պայմանագրի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահող՝ ---------- ***Ա.Եղիշյան***

անդամներ՝

---------- ***Վ.Քալանթարյան***

---------- ***Կ.Հովհաննիսյան***

---------- ***Հ.Հակոբյան***

քարտուղար՝ ---------- ***Հ.Հակոբյան***